



Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն







ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԴԱՄԱՆԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաստատված՝

2013թ. հուլիսի 26-ին կայացած ՀՀ վարչապետին
կից Արդյունաբերական խորհրդի նիստին

Բովանդակություն

	Ադամանդագործություն. գարգացման գլոբալ միտումներ	3
	Հայաստանի ադամանդագործության ոլորտի գնահատում	27
	Հայաստանի ադամանդագործության գարգացման ռազմավարություն	39
	Հավելվածներ	47

ԱՂԱՄԱՆԴԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Ադամանդների արդյունաբերության սկիզբ է առել շուրջ 150 տարի առաջ և անցել գարգացման երեք փուլ:

1870-1910թթ

- ՀԱՀ-ում հայտնաբերվում է ադամանդի առաջին խոշոր պաշարները և «De Beers» ընկերության հիմնադրում:
- 1902թ. «De Beers»-ը վերահսկում է ադամանդի համաշխարհային արդյունահանման և վաճառքի 90%-ը:
- Արդյունահանման տարեկան աճ՝ 3%;

1910-1950թթ

- Հայտնաբերվում են ադամանդի պաշարներ Ռուսաստանում, աֆրիկյան այլ երկրներում:
- 1947թ. «De Beers» ընկերությունը սկսում է «A Diamond is forever» գովազդային արշավը, որի նպատակն էր ադամանդը ներկայացնել որպես սիրո խորհրդանիշ:
- 1939թ. ԱՄՆ-ում ամուսնական մատանիների 10%-ն ադամանդով են:
- «De Beers»-ն ակտիվորեն ձևավորում է ադամանդի բրենդը՝ ներգրավելով ժամանակի հայտնի նկարիչներին, Մեծ Բրիտանիայի արքայական տան անդամներին:
- Արդյունահանման տարեկան աճ՝ 3%:

1960-2010թթ

- «De Beers»-ի մենաշնորհի ավարտ: Չաիրը, այնուհետև նախկին ԽՍՀՄ-ը սկսում են ադամանդ վաճառել շրջանցելով «De Beers»-ի միասնական դիստրիբուցիոն համակարգը: 2000թ. Եվրահանձնաժողովը ստիպում է De Beers-ին վերանայել ռուսական «Ալոտաս» ընկերության հետ կնքած ադամանդների ձեռք բերման բացառիկ իրավունքը:
- Արդյունքում 2010թ. աշխարհում չմշակված ադամանդների վաճառքի արժեքի միայն 40%-ն է իրականացվում «De Beers»-ի դիստրիբուցիոն համակարգի միջոցով:
- Ադամանդի լայն կիրառություն ունեցողության մեջ: 90-ականների վերջին ԱՄՆ-ում ամուսնական մատանիների 80%-ը ադամանդով են:
- Ամբողջ ուժով գործարկվում է Բոթսվանայի Ջվանենգ (Jwaneng) հանքավայրը, որի արդյունքում այն դառնում է չմշակված ադամանդի խոշորագույն արտահանողը: Աճում են նաև աֆրիկյան այլ պետություններում արդյունահանման ծավալները:
- 2003թ. մեկնարկում է Կիմբերլիի գործընթացը, որը նպատակ ուներ կանխել Աֆրիկայի հակամարտության գոտիներից ադամանդների արտահանումը:
- Ադամանդ արտադրող ընկերությունները հրաժարվում են վաճառել «De Beers»-ի դիստրիբուցիոն համակարգի միջոցով՝ փորձելով իրենց ներկայությունն ապահովել արժեշոթյայի բոլոր օղակներում:
- Արդյունահանման տարեկան աճ՝ 4%:

Կենտրոնացվածություն

- Այսօր աղամանդագործությունը կենտրոնացված է մի շարք աշխարհագրական կետերում: Սա պայմանավորված է թե պատմական հանգամանքներով (Բելգիա՝ Անտվերպեն, Իսրայել՝ Ռամաթ Գան), թե ազգային առանձնահատկությունների և տնտեսական արդյունավետության պատճառներով (Հնդկաստան՝ Սուրաթ, ԱՄՆ՝ Նյու Յորք, Բելգիա՝ Անտվերպեն, Թայլանդ, Չինաստան)
- Մյուս կողմից ոլորտը կենտրոնացված է էթնիկ-կրոնական խմբերի, առավելապես ուղղափառ հրեաների և հնդկական Գուջարաթ նահանգի բնակիչների ձեռքերում: Աղամանդի վերամշակման ոլորտում գերակշռում են ընտանեկան ձեռնարկությունները:

Վստահություն

- Աղամանդագործության և առուվաճառքի ոլորտում խիստ կարևոր են վստահությունն ու անձնական կապերը: Շատ հաճախ բորսաներում կնքվում են բանավոր գործարքներ՝ «ազնիվ խոսքի» հիման վրա:
- Ոլորտը կարգավորվում է ոչ ֆորմալ ինստիտուտների կողմից:

Գնահատման դժվարություն

- Ի տարբերություն ոսկու և այլ թանկարժեք մետաղների, աղամանդի գնահատումը կրում է շատ սուբյեկտիվ բնույթ:
- Մշակված աղամանդի գինը կախված է չորս բնութագրիչներից՝ քաշ, մաքրություն, գույն, տաշվածք: Օրինակ, տարբեր միջազգային սերտիֆիկացիոն ընկերություններ ունեն աղամանդի տաշվածքի գնահատման իրենց մոտեցումները:
- Աղամանդի գինը կարող է զգալիորեն տատանվել, երբ այն դասակարգվում է ըստ իր չորս հիմնական հատկանիշների: Աղամանդի գնահատման դժվարությունները մասնավորապես խոչընդոտ են այն որպես ներդրումային ապրանք օգտագործելու համար:


Արտադրության մոբիլություն

- Աղամանդի վերջնական արժեքի մեջ տրանսպորտային ծախսերի ցածր կշռի պատճառով՝ աղամանդի մշակումը կարող է իրականացվել ցանկացած աշխարհագրական վայրում:
- Բիզնեսի գարգացման հիմնական գործոններն են հումքը, և վերամշակողի հեղինակությունն ու կապերը: Հետևաբար հեշտությամբ արտադրությունները կարող են տեղափոխվել մի երկրից մյուսը՝ իրենց հետ տանելով որակյալ մասնագետներին:

Աղամանդի վերամշակման փուլում ավելացված արժեքը կազմում է մշակված աղամանդի վաճառքի արժեքի մոտ 25-30%:

Աղամանդով ոսկերչության իրերի արժեզրթան

մլրդ. ԱՄՆ դոլ., 2010 թ.



* Միայն աղամանդով ոսկերչական իրեր

Արժեզրթայի յուրաքանչյուր փուլում ավելացված արժեք

- Աղամանդի արդյունահանում խիստ կենտրոնացված է:
- Ոլորտում գերակշռում են խոշոր ԱՄԿ-ները՝ Alrosa, DeBeers, Rio Tinto, BHP Billiton.
- Միջին գործառնական մարժան՝ 22-26%

- Աղամանդի հումքի վաճառքն հիմնականում իրականացվում է արդյունաբերողների մոտ հավատարմագրված վերավաճառողների կողմից:
- Շուկան կենտրոնացված է փոքր թվով խաղացողների ձեռքում:

- Աղամանդի վերամշակմամբ զբաղվող հիմնական երկրներն են՝ Հնդկաստան(47%), Իսրայել (9%), ՀԱՀ(9.3%), Ռուսաստան(4%), Բելգիա(4%):
- Ոլորտում գերակշռում են մասնավոր, ընտանեկան ձեռնարկությունները:
- Միջին գործառնական մարժան՝ 1-4%

- Ոլորտում աշխատում են թե՛ մանր, ընտանեկան ընկերություններ, անհատներ, և թե՛ խոշոր ԱՄԿ-ներ (Tiffany, Cartier, Chow Tai Fook): Վերջիններս փորձում են իրենց ներկայությունն ապահովել նաև արժեզրթայի մյուս հատվածներում:
- Միջին գործառնական մարժան կազմում է 3-5%:


- Աղամանդի զարդերի սպառման հիմնական շուկաներն են՝ ԱՄՆ(42%), Չինաստան/ Հոնկոնգ (13%), Հնդկաստանը(12%), Ճապոնիան(10%):
- Միջին գործառնական մարժան կազմում է 5-10%:

* Մինչև հարկերի և տոկոսների վճարումը ձևավորված շահույթի մարժան

Ադամանդի հումքի հիմնական մասի շրջանառությունը վերահսկվում է առաջնային գնորդների կողմից

- Առաջնային գնորդները (sightholder) այն ընկերություններն, որոնք իրավունք ունեն ձեռք բերել չմշակված ադամանդն անմիջապես արդյունահանողից:
- Այս համակարգը ներմուծվել է «De Beers»-ի կողմից: Առաջնային գնորդներների ցուցակը հաստատվում է երեք տարի ժամանակով: Ներկայումս «De Beers»-ից չմշակված ադամանդ գնելու իրավունք ունի 78 ընկերություն: Յուրաքանչյուր հինգ շաբաթը մեկ անգամ, նրանք այցելում են «De Beers»-ի գրասենյակները, ուսումնասիրելու իրենց պատվերով կազմված ադամանդի խմբաքանակները և կայացնում են այն ձեռք բերելու որոշումը: Նրանք իրավունք ունեն նաև հրաժարվելու խմբաքանակից, սակայն իրավունք չունեն գնել խմբաքանակից առանձնացված ադամանդներ: «De Beers»-ն իր ադամանդների 90% վաճառում է այս համակարգով, 10%-ը «Diamdel» առցանց աճուրդի միջոցով:
- Նույնատիպ համակարգեր ունեն նաև «Rio Tinto»-ն, «Ալբոսան»:
- Ոչ ավել քանի 100 անկախ sightholder-ներ վերահսկում են աշխարհի չմշակված ադամանդի 70%-ը:
- Ներկայումս մշակողների 90%-ը, ոսկերիչների 30% և մանրածախ առևտրականների 10%-ը նաև ադամանդի հումքի առաջնային գնորդներ են:
- Արժեշոթայի տարբեր օղակներում ներգրավված ընկերությունները ձգտում են ուղղահայաց ինտեգրացիայի: Մասնավորապես «De Beers» ընկերությունը արդեն իսկ հանդես է գալիս սեփական ոսկերչական բրենդով, ունի խանութների իր ցանցը: «Tache» ընկերությունը զբաղվում է հումքի ձեռք բերմամբ, մշակմամբ, մանրածախ և մեծածախ վաճառքով, ինչպես նաև ոսկերչական արտադրությամբ:


Ադամանդի արդյունահանում, ըստ երկրների
Բնեղեն արտահայտությամբ, %



Աշխարհում արդյունահանվող հումքը
կենտրոնացված է 4 երկրներում

- Աշխարհի չորս խոշորագույն արդյունահանող երկրներին բաժին է ընկնում հումքի արդյունահանման 69%-ը:
- Երկրները տարբերվում են ադամանդի որակական հատկանիշներով, ինչի արդյունքում տարբերվում է նաև մեկ կարատի արժեքը: Օրինակ Ռուսաստանին է բաժին ընկնում արդյունահանված ադամանդի ծավալի 27%, բայց արժեքի 20%-ը: Կանադայի կշիռը բնեղեն արտահայտությամբ կազմում է 9%, իսկ արժեքի մեջ՝ 20%:

Ադամանդի արդյունահանում, ըստ ընկերությունների
մլն կարատ




De Beers-ը և ALROSA-ն ապահովում են հումքի
կեսը

- 2010թ. աշխարհի չորս խոշորագույն արդյունահանող ընկերությունները վերահսկում են շուկայի 65%-ը (ծավալային):
- 2009-2010թթ. «Ալտոսան» առաջատարն է արդյունահանման ծավալներով՝ անցնելով ոլորտի բազմամյա առաջնորդ De Beers-ին:
- Չնայած ծավալով առաջնայինը «Ալտոսան» է, չմշակված ադամանդի արժեքային վաճառքներով (ներառյալ պաշարները) «De Beers»-ը գերազանցում է «Ալտոսային»:
- Բացի ռուսական հանքերից, «Ալտոսան» փայաբաժին ունի նաև անգոլական «Catoca» հանքավայրում:
- «BHP Billiton»-ին է պատկանում երրորդ ամենախոշոր հանքավայրն աշխարհում՝ կանադական «Ekati»-ն:

Ադամանդի արդյունահանումը (բնեղեն, արժեքային), մեկ կարատի արժեքը


մլն ԱՄՆ դոլար, մլն կարատ



Աղբյուրը՝ Kimberley Process

Ադամանդի մեկ կարատի միջին գինը

ԱՄՆ դոլար




Աղբյուրը՝ Kimberley Process

Արդյունահանողները կարգավորում են գները

- Չմշակված ադամանդի գնագոյացումը ունի շատ փոքր թափանցիկություն, այն որոշվում է փոքրթիվ արդյունահանողների և առաջնային գնորդների կողմից:
- Համաշխարհային տնտեսական ճգնաժամի առաջացրած ադամանդի պահանջարկի անորոշությունը ստիպեց գլխավոր խաղացողներին կրճատել արտադրության ծավալները՝ գնանկումից խուսափելու համար: 2009թ. «De Beers»-ն արտադրել է 25 մլն կարատ, 2006թ.՝ 51 մլն-ի փոխարեն: Ռուսական «Ալթոսան» գնաց այլ ճանապարհով՝ արտադրության ավելցուկը վաճառելով պետական «Գոխրան»-ին: De Beers-ի օրինակին հետևեցին նաև մյուս ընկերությունները, արդյունքում արտադրության ծավալները 2006թ.-ի 176 մլն կարատից հասան 120 մլն-ի 2009թ.-ին:
- 2010թ. շուկան արդեն սկսում է վերականգնվել: Կարատների ծավալը աճում է 7%-ով, արտադրության արժեքը՝ 38%-ով, իսկ մեկ կարատի գինը՝ 28%-ով:
- Պատմականորեն «De Beers»-ը ստանձնել էր շուկայում գների կարգավորիչի դերը՝ ավելցուկային առաջարկի դեպքում պաշարներ կուտակելով և դրանք վաճառելով՝ պահանջարկի ավելցուկի պայմաններում: Սակայն 2002-2007թթ. De Beers-ը սպառել է իր պաշարները և ներկայումս նման դեր կարող է խաղալ միայն ռուսական «Գոխրանը», որպես ադամանդի աշխարհի խոշորագույն գանձարան:
- Ադամանդի արժեքը տարբերվում է ըստ առաջացման երկրի, նույնիսկ հանքավայրի: Լեռնոտյի Լեթսենգ հանքավայրը հայտնի է իր մեծ և բարձրակարգ ադամանդներով (մեկ կարատի միջին արժեքը մոտ 1,000 ԱՄՆ դոլար), ավստրալիական Արգայլ հանքահորի մեկ կարատի արժեքն է մոտ 16 ԱՄՆ դոլար:

Արդյունահանվող ադամանդի կառուցվածքը ըստ քաշի և արժեքի 2009թ.




Աղբյուրը՝ Bain & Company

0.1-2 կարատանոց չմշակված ադամանդի կշիռը արդյունահանման բնեղեն կառուցվածքում 45% է, և արժեքայինում՝ 30%:

- Հայկական ընկերություններն աշխատում են հիմնականում 0.1-2 կարատանոց քարերի սեզմենտում:
- Մեծ քաշով ադամանդները մշակվում են զարգացած երկրներում, քանի որ այդ դեպքում աշխատավարձը ադամանդի արժեքում շատ փոքր մասնաբաժին ունեն:
- Մինչ 0.1 կարատ քաշով ադամանդները կազմում են միջին հանքի արդյունահանման ծավալի 50%-ը:
- Եթե առաջներում մանր քարերը հիմնականում օգտագործվում էին արդյունաբերական նշանակությամբ, այժմ դրանք մշակվում են Հնդկաստանում որպես ոսկերչության հումք:
- Ադամանդի քաշի փոփոխությունը բերում է գնի անհամաչափ փոփոխության: 2011թ. տվյալներով չորս կարատանոց բարձր մաքրության քարը վաճառվել է միջինում 500,000 դոլարով, իսկ մեկ կարատանոցը՝ 25,000 դոլարով:
- Յուրահատուկ մեծությամբ քարերը սովորաբար վաճառվում են աճուրդների միջոցով: «Ալտոսան» 10.8 կարատ և ավել քաշով չմշակված ադամանդները վաճառում է միայն աճուրդով:
- Մեծ քաշով քարերի գներն ավելի քիչ են ենթարկվում տնտեսական գործոնների ազդեցությանն ու աճում են ավելի բարձր տեմպերով քան փոքրերինը:
- 2 կարատ և ավել քաշով չմշակված ադամանդը կազմում է ընդհանուրի ծավալի 5%-ը և արժեքի 50%-ը:


Ադամանդի համաշխարհային վերամշակումը



Աղբյուրը՝ Tacy Ltd, IDEX Online, Ի-Վի Քոնսալթինգի հաշվարկներ
 *Tacy-ի կողմից օգտագործվում է «օգտագործված կամ օգտագործմանը պատրաստ հումք» սահմանումը

Ադամանդի վերամշակումը կապված է ոսկերչական շուկայի գարգացման միտումներից

Տարեկան միջին աճ, արժեքային արտահայտությամբ



Աղբյուր՝ GFMS, The London Bullion Market Association, Tacy Ltd, IDEX Online, Ի-Վի Քոնսալթինգի հաշվարկներ

Երկարաժամկետ հատվածում ադամանդի վերամշակման ծավալների դինամիկան կապված է ոսկերչական շուկայի գարգացման միտումների հետ

- 2008թ. ոսկերչությունում ադամանդի օգտագործման ծավալներն ընկնում են 9%-ով: Պատրաստ չլինելով նման գարգացման, վերամշակողները կուտակում են պատրաստի արտադրանքի պաշարներ:
- 2009թ.-ին ճգնաժամը հասնում է նաև վերամշակողներին՝ ծավալներն ընկնում են միանգամից՝ 30%-ով: Միննույն ժամանակ արտադրողները սկսում են վաճառել նախորդ տարվա պաշարները:
- 2011թ. առաջին կեսին «De Beers» ընկերության դիստրիբյուցիոն թևը (DTC) բարձրացրեց ադամանդի հումքի գները մոտ 44%-ով: Արդյունքում վերամշակողները սկսեցին կուտակել պաշարներ: Նույն տարում 1 մլրդ. դոլարի ադամանդ է շուկա մուտք գործել գրավատների միջոցով: Միննույն ժամանակ արտադրողները կուտակել են մոտ 1.3 մլրդ դոլարի պաշարներ, ինչն իր ազդեցությունն է ունեցել 2012թ.-ի արտադրության ծավալների վրա:
- Ադամանդի հումքի արդյունահանման ոլորտն ավելի կենտրոնացված է, և գներն այստեղ ավելի հեշտ են կարգավորվում մասնակիցների կողմից: Արդյունքում արդյունահանողներն ավելի ճկուն են շուկայի փոփոխություններին արձագանքելիս և հումքի գներն աճում են ավելի արագ տեմպերով, քան վերամշակված ադամանդինը: Արդյունքում նվազում է մշակողների մարժան:
- 2012 թվականին հումքի հիմնական արդյունահանողներն իջեցրել են հումքի գինը, որի ենթադրում է դրական ազդեցություն վերամշակման ոլորտում:


Մշակված ադամանդի ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծումը խիստ կենտրոնացած է: Առաջին հինգ երկրներին բաժին է ընկնում ադամանդների ներմուծման շուրջ 81%-ը և արտահանման 83%-ը:

Առևտրի կենտրոնները միշտ չէ որ ունեն սեփական վերամշակում: Իսրայելի ու Բելգիայի դերը վերամշակման ոլորտում անընդհատ նվազում են, սակայն դրանք շարունակում են մնալ առևտրի կենտրոններ: Արաբական Միացյալ Էմիրությունները, չունենալով սեփական վերամշակում, այսօր լուրջ հայտ է ներկայացնում դառնալու ադամանդի առևտրի կենտրոն:

Մյուս կողմից աճում է գարգացող երկրների՝ Հոնկոնգ, Հնդկաստան, Չինաստան, մասնաբաժինները համաշխարհային առևտրում: Մի կողմից դա պայմանավորված է ներքին պահանջարկի աճով, մյուս կողմից վերամշակող արդյունաբերության գարգացմամբ:


Մշակված ադամանդի ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Հիմնական արտահանողների մասնաբաժնի դինամիկան (արժեքային արտահայտությամբ)



Մշակված ադամանդի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Հիմնական ներմուծողների մասնաբաժնի դինամիկան (արժեքային արտահայտությամբ)



Իսրայել/Բելգիա


- Բելգիան և Իսրայելն աղամանդի մշակման ամենահին և ավանդական կենտրոններն են եղել, սակայն աշխատուժի թանկացման պատճառով այժմ հիմնականում զբաղվում են աղամանդի առևտրով:
- Այսօր Իսրայելում և Բելգիայում մնացել են հիմնականում բարձրորակ և մեծ կարատով քարերի մշակողները:
- Բելգիական և իսրայելական ընկերությունները աղամանդի վերամշակումը հիմնականում արտապատվիրում են Չինաստան, Հնդկաստան, Շրի Լանկա, Թայլանդ:
- Իսրայելի աղամանդագործական կլաստերը Բամաթ Գան քաղաքում է: Այստեղ են գտնվում միանգամից աղամանդի երեք բորսա: Բելգիայում ոլորտը կենտրոնացված է Անտվերպեն քաղաքում:

Աֆրիկա

- Աֆրիկյան մայրցամաքին է բաժին ընկնում աղամանդի արդյունահանման 56%-ը (ծավալային):
- Մի շարք Աֆրիկյան երկրներում կառավարությունը պահանջում է, որ արդյունահանված աղամանդի որոշակի մասը վերամշակվի տեղում: Արդյունքում Աֆրիկայի վերամշակման ծավալները 2008-2010թթ. աճել է 28%-ով՝ չնայած համաշխարհային անկմանը:

Աղամանդների համաշխարհային վերամշակման աշխարհագրական բաշխումը

Արժեքային արտահայտությամբ, 2011թ.



Աղբյուրը՝ Tacy ltd, 2011

Չինաստան/Թայլանդ

- Չինաստանն երկրորդն է աշխարհում աղամանդի սպառման ծավալներով: Ըստ կանխատեսումների այն կարող է 2015թ.-ին դառնալ առաջինը:
- Հոնկոնգում և Շանհայում են գտնվում աղամանդի խոշորագույն բորսաներից երկուսը:
- Չինաստանում և Թայլանդում վերամշակող ընկերությունների մեծ մասը խոշոր ընկերությունների մասնաճյուղեր են:
- 2007թ. տվյալներով Չինաստանում գործում էին մոտ 170 վերամշակող ընկերություն, 110,000 աշխատողով: Այստեղ հիմնականում մշակում են 1/2 կարատանոց քարեր: Թայլանդում տաշողների քանակը շուրջ 10,000 է:


Հնդկաստան

- 2011թ. տվյալներով Հնդկաստանին է բաժին ընկնում աղամանդի վերամշակման 57%- (արժեքային): Հնդկաստանը մասնագիտացված է մանր քարերի մշակման վրա, այստեղ են մշակվում աշխարհի աղամանդների ծավալի 97%-ը:
- Ոլորտում զբաղված են մոտ 1 մլն մարդ:
- Մումբայում է գտնվում աշխարհի աղամանդի ամենախոշոր բորսան:
- Մեկ կարատի մշակման արժեքն է \$ 10:

Ռուսաստան

- Ռուսաստանում աղամանդի մշակումը կենտրոնացված է Մմոլենսկ (խորհրդային «Կրիստալ» գործարանի ավանդույթներով), Կալինինգրադ քաղաքներում և Յակուտիայի հանրապետությունում:
- Մեկ կարատի մշակման արժեքն է 80-90 դոլար:
- Ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 6,000-7,000 մարդ:

Աղամանդի վերամշակման մասնաբաժիններն ըստ երկրների, արժեքային



Աղամանդագործությունը տեղափոխվում է ասիական երկրներ:

- Վերջին տարիներին աճել է Հնդկաստանի և Չինաստանի տեսակարար կշիռները աղամանդի վերամշակման ոլորտում, ինչը պայմանավորված է այդ երկրների ծախսային առավելություններով:
- Աղամանդի վերամշակման երբեմնի կենտրոնները՝ Իսրայելն ու Բելգիան կորցրել են իրենց դիրքերը ոլորտում: 2002-2010 թթ.-ին Բելգիայի տեսակարար կշիռը պահպանվում է 3-5%-ի շրջանակներում, իսկ Իսրայելը գրանցել է զգալի անկում:
- Հարավային Աֆրիկայի երկրները, Կանադան պահանջում են, որ իրենց մոտ արդյունահանված աղամանդի որոշ մասը մշակվի տեղում: Ըստ այդմ այս երկրների տեսակարար կշիռը շարունակելու է աճել:

Քարերի սերտիֆիկացում

- Աղանանդի մանրածախ վաճառքում խիստ կարևոր է նաև քարերի սերտիֆիկացումը: Սերտիֆիկատում տրվում է աղանանդի չորս հիմնական հատկանիշների բնութագիրը:
- Համաշխարհային ճանաչում ունեցող սերտիֆիկացիոն ծառայություններն են՝ Ամերիկայի հեմոլոգիական ինստիտուտը (GIA), Ամերիկյան ակնագործների միությունը (AGS), Միջազգային հեմոլոգիական ինստիտուտը (IGI), HRD Antwerp կազմակերպությունը:
- Սերտիֆիկացիոն այս ընկերություններն իրենց մասնաճյուղերն ունեն աղանանդագործության բոլոր հիմնական կենտրոններում:
- Վերոնշյալ կազմակերպությունները սերտիֆիկացիայից բացի իրականացնում են նաև ուսումնական ծրագրեր, գիտական հետազոտություններ:

Լոգիստիկա

- Աղանանդագործության և աղանանդի առևտրի ոլորտում խիստ կարևոր է դրա տեղափոխման անվտանգությունը:
- Brinks ընկերությունը ոլորտի միջազգային առաջատարներից է, իրականացնում է թանկարժեք քարերի տեղափոխում, կարճաժամկետ և երկարաժամկետ պահեստավորում, ունի հատուկ ծառայություն ցուցահանդես այցելուների համար: Ընկերությունը ներկայացված է ոլորտի բոլոր խոշորագույն կենտրոններում:
- Հաշվի առնելով արտադրանքի բարձր գինը տրանսպորտային ծախսերի դերը էական չի:

Բորսաներ

- Աղանանդի հումքի առաջնային վերավաճառքի 80%-ը կատարվում է Անտվերպենի բորսաների միջոցով:
- Աղանանդի բորսաների համաշխարհային ֆեդերացիայի կազմում ընդգրկված է 27 բորսա՝ 20 երկրներում:
- Աշխարհի խոշորագույն բորսաներն են՝ Բհարաթը (Հնդկաստան), Աղանանդ Վաճառողների Ակումբը-DDC (ԱՄՆ), Իսրայելի աղանանդի բորսան (Israel Diamond Exchange), Շանհայի աղանանդի բորսան, Անտվերպենի, Դուբայի բորսաները:
- Աղանանդի ավանդական բորսաներում մուտքը նորեկների համար խիստ սահմանափակ է: Հաճախ պահանջվում է բորսայի անդամներից որևէ մեկի հովանավորչություն, կամ նույնիսկ կոնկրետ էթնիկ, կրոնական խմբի պատկանելիություն:


Ֆինանսավորում

- Ոլորտը պահանջում է մասնագիտացված ֆինանսական ծառայություններ՝ հիմնականում թանկ հումքը ձեռք բերելու համար:
- Ոլորտի ֆինանսավորումն իրականացվում է կամ մասնագիտացված բանկերի (Antwerp Diamond Bank), կամ էլ խոշոր բանկերի (ABN AMRO, HSBC) մասնագիտացված ստորաբաժանումների կողմից: Հնդկաստանում աղանանդագործներին սպասարկում են 50-60 բանկ:
- Ֆինանսավորման տեսակները կարող են տարբերվել ըստ երկրների: Հնդկաստանում գործում են post shipment, pre shipment վարկավորման տեսակները, որոնք տրվում են կամ արդեն գնված հումքի, կամ էլ արդեն առաքված պատրաստի արտադրանքի դիմաց:

Աղանդագործության ոլորտը գործում է ֆինանսավորման հատուկ մեխանիզմների առկայությամբ:

- Ոլորտի ֆինանսավորումը իրականացվում է մասնագիտացված, կամ մասնագիտացված ստորաբաժանումներով բանկերի միջոցով:
- Ոլորտի առաջատարներից են «ABN AMRO» (ֆինանսավորում է հիմնականում խոշոր ընկերություններին), «Antwerp Diamond Bank» (միակ մասնագիտացված բանկն աշխարհում, աշխատում է հիմնականում փոքր ընկերությունների հետ), իսրայելական հինգ բանկ (Union Bank of Israel, Israel Discount Bank և այլն), հնդկական 50-60 բանկեր (հիմնականում պետական), «HSBC», և այլն:
- Վարկերը տրամադրվում են հիմնականում ընկերությունների դեբիտորական պարտավորությունների նկատմամբ:
- Ֆինանսավորման մեխանիզմները տարբերվում են ըստ երկրների:
- Տնտեսական ճգնաժամի արդյունքով կրճատվել է ոլորտին տրամադրվող վարկերի ծավալները, արդյունքում շատ վերամշակողներ ստիպված են եղել օգտագործել սեփական միջոցները:

Համաշխարհային աղանդագործության պարտքը



Հնդկաստան

- Pre shipment credit-տրվում է ակրեդիտիվի հիման վրա արտահանող ընկերություններին, հումք ձեռք բերելու համար
- Post shipment credit- տրվում է արտահանող ընկերություններին պատրաստի արտադրանքի առաքման հաշիվ ապրանքագիր ներկայացնելիս:
- Հնդկաստանում աղանդագործությունը հայտարարված է վարկավորման համար գերակա ճյուղ, արդյունքում այն վայելում է ավելի ցածր տոկոսադրույքներ և դրան են հատկացված ավելի մեծ ծավալի վարկային միջոցներ:

Մշակված աղամանդի մեծածախ վաճառքի 30-40%-ը իրականացվում է ցուցահանդեսների միջոցով

- Աղամանդի ոլորտում առանձնացված ցուցահանդեսներ չկան: Աղամանդ վերամշակողներն իրենց արտադրանքը ներկայացնում են հիմնական ոսկերչական ցուցահանդեսներում:
- Ակնագործության տեսանկյունից ամենակարևոր ցուցահանդեսները կազմակերպվում են Լաս Վեգասում, Հոնկոնգում, Բազելում:
- Բացի գլոբալ ցուցահանդեսներից, աղամանդագործության կենտրոններում կազմակերպվում են նաև ռեզիոնալ ցուցահանդեսներ: Հնդկաստանի Մումբայ քաղաքում անց կացվող Միջազգային ոսկերչական ցուցահանդեսին մասնակցում է մինչև 700 ընկերություն: Բանգկոկում անկացվող ցուցահանդեսին մասնակցում են մինչև 1,200 կազմակերպություն և 35,000 այցելու:
- Խոշոր ցուցահանդեսներում առանձնացված տաղավարներ ունեն Բելգիան, Իսրայելը, Հնդկաստան, Թուրքիան և այլն:
- Հնդկական Ոսկերչության և աղամանդագործության արտահանման գարգացման խորհուրդը (GJEPC) կազմակերպում է հնդկական ձեռնարկությունների միասնական հարթակով ցուցահանդեսների մասնակցելու գործընթացը: Իսրայելում այն իրականացնում է **Իսրայելի** աղամանդի ինստիտուտը (մասնավոր ընկերությունների խումբ):

JCK Las Vegas

- Աղամանդագործության և ոսկերչության խոշոր ցուցահանդեսներից մեկը: Անց է կացվում տարին մեկ անգամ, ամռանը, չորս օրով:
- Ըստ կազմակերպիչների վիճակագրության, այցելուների 88%-ը ունեն գնման որոշում կայացնելու իրավունք, 33% գնում են ներկայացված ապրանքների բոլոր կատեգորիաներից:
- Ցուցահանդեսում աղամանդին հատկացված է առանձին բաժին:

Հոնկոնգի ոսկերչության և ակնագործության ցուցահանդես

- Անց է կացվում տարին երկու անգամ՝ սեպտեմբեր և հունիս ամիսներին:
- 2011թ. սեպտեմբերի ցուցահանդեսին մասնակցել են 3,450 ցուցադրող և 51,500 այցելու:
- Մեկ քառակուսի մետրի արժեքը տատանվում է \$356-\$446 սահմաններում:

Հոնկոնգի ոսկերչության միջազգային ցուցահանդես

- Ամենամյա ցուցահանդես, անց է կացվում գարնանը:
- Վերջին տվյալներով մասնակցել է 3,118 ցուցադրող և 38,108 այցելու:

Baselworld ժամացույցների և ոսկեդենի միջազգային ցուցահանդես

- Անց է կացվում ամեն տարի՝ գարնանը:
- Վերջին տվյալներով մասնակցել է 104,000 այցելու և 1,815 ցուցադրող կազմակերպություն:

Ադամանդի նկատմամբ համաշխարհային պահանջարկի և առաջարկի աճի սցենարները, բնեղեն արտահայտությամբ (2010-2020թթ.)*

Առավելագույն աճ

Առաջարկ՝ 4.6% տարեկան աճ
Պահանջարկ՝ 11.1% տարեկան աճ

Առաջարկ՝

Գլխավոր հանքավայրերում արդյունահանումն ավելանում է, Զիմբաբվեում և Կոնգոյի ԴՀ-ում քաղաքական իրավիճակի կայունացմամբ՝ արդյունահանումը կտրուկ աճում է այստեղ ևս:

Պահանջարկ՝

Համաշխարհային ՀՆԱ-ն աճում է միջինում 3.9%-ով, ինչի արդյունքում աճում է նաև անհատական սպառումը զարգացած երկրներում: Միջին խավը Հնդկաստանում և Չինաստանում աճում է ավելի արագ տեմպերով:

Չափավոր աճ

Առաջարկ՝ 2.8% տարեկան աճ
Պահանջարկ՝ 6.4% տարեկան աճ

Առաջարկ՝

2017թ. արդյունահանումը հասնում է մինչ ճգնաժամային մակարդակին, նոր հանքավայրերը տալիս են լրացուցիչ 23 մլն կարատ, այլ հանքավայրերի հայտնաբերում և շահագործում չի սպասվում:

Պահանջարկ՝

Համաշխարհային տնտեսությունը վերականգնվում է, միջին խավի չափերն աճում են Հնդկաստանում (8% միջին տարեկան) և Չինաստանում (10%), անհատական սպառումն աճում է հիմնական սպառող զարգացող երկրներում՝ միջինում 2.5%:

Վատատեսական

Առաջարկ՝ -0.5% տարեկան աճ
Պահանջարկ՝ 4.7% տարեկան աճ

Առաջարկ՝


Հիմնական հանքավայրերից (Զվանենգ, Արգայլ և այլն) արդյունահանումը չի հասնում պլանավորված մակարդակին, «Ալթոսայի» արդյունահանումը մնում է նույն մակարդակին, և չի սկսվում պլանավորված շահագործումը նոր հանքավայրերում:

Պահանջարկ՝

Սկսվում է տնտեսական անկման նոր փուլ: Համաշխարհային ՀՆԱ-ն աճում է տարեկան ընդամենը 2.5%-ով: Հնդկաստանում և Չինաստանում նկատվում է տնտեսության լճացում:

*Ադամանդի կանխատեսումների համար հիմք են հանդիսացել պատմական զարգացման միտումները և հիմնական սպառման շուկաներում կենսամակարդակի կանխատեսումները: Հնդկաստանի և Չինաստանի դեպքում որպես առանձնահատուկ գործոն է դիտարկվում միջին խավի չափի աճը: Աղբյուրը՝ Bain & Company

Չմշակված աղամանդի առաջարկը
մլն կարատ



Տարեկան միջին
աճի տեմպ
2010-2020

- 4.6%
- 2.8%
- 0.5%




Աղամանդների արդյունահանման ծավալները 2020թ. առավելագույնը կարող են հասնել 209 մլն կարատի, իսկ վատատեսական սցենարում կրճատվել շուրջ 4-5%-ով

- Մինչև 2020թ. նախատեսվում է 13 նոր հանքավայրերի շահագործում, որոնք միասին կարող են արտադրել մոտ 23 մլն կարատ մինչև 2020թ.
- Չափավոր աճի պայմաններում 2020թ. աղամանդի արդյունահանման ծավալները կկազմեն 175 մլն կարատ՝ հասնելով մինչև ճգնաժամային (2006թ.) ծավալներին:
- «De Beers»-ն այս տարի նախատեսում է սկսել կանադական «Gahcho Kue» հանքավայրի շահագործումը (մինչև 50 մլն կարատ պաշարներով): «Rio Tinto»-ն նախատեսում է սկսել հնդկական «Bunder» հանքավայրի շահագործումը (պաշարները՝ 27 մլն կարատ), տարեկան մինչև 3.5 մլն կարատ արդյունահանման (ամբողջ հզորությամբ գործարկման դեպքում):
- Նոր հանքավայրերի շահագործումը դժվարանում է համայնքների կողմից առաջ քաշվող բնապահպանությանը և կայուն զարգացմանը միտված պահանջների արդյունքում:
- Նոր հանքավայրերի հայտնաբերման պարագայում, դրանց շահագործման հնարավորությունը մոտակա տաս տարում քիչ հավանական է:
- Ըստ կանխատեսումների ակնկալվում է գների չափավոր աճ առավելագույն և չափավոր աճի սցենարներում՝ մոտ 10-15% 2020թ.-ին 2010-ի նկատմամբ: Վատատեսական սցենարի դեպքում այն կլինի 3-4%-ի սահմաններում:


Աղբյուրը՝ Bain & Company

Չմշակված աղամանդի առաջարկի դրամային արտահայտությամբ
աճը
2010=1




Աղբյուրը՝ Bain & Company

Չմշակված ադամանդի պահանջարկը բնեղեն արտահայտությամբ մլն կարատ




Աղբյուրը՝ Bain & Company

Չմշակված ադամանդի պահանջարկի ավելցուկը մլն կարատ



Աղբյուրը՝ Bain & Company


Տարեկան միջին աճի տեմպ 2010-2020



Ջարգացման ցանկացած սցենարի դեպքում կանխատեսվում է, որ պահանջարկը կգերազանցի առաջարկը:

- Ադամանդի նկատմամբ պահանջարկը ձևավորվելու է հիմնականում ոսկերչության ոլորտի կողմից:
- Այդ պահանջարկը հիմնականում պայմանավորված է տնտեսական աճով ու մի շարք մակրոտնտեսական գործոններով: Ջարգացած երկրներում ադամանդի պահանջարկը կորելացված է համախառն մասնավոր սպառման ծավալների դինամիկայի հետ, իսկ զարգացող երկրներում՝ հատկապես Հնդկաստանում և Չինաստանում, միջին խավի կշռի աճի, ինչպես նաև արևմտյան արժեքների ընդօրինակման հետ:
- Ըստ կանխատեսումների մոտակա 10 տարում սպասվում է պահանջարկի զգալի ավելցուկ առաջարկի նկատմամբ:

Մշակված ադամանդի պահանջարկի մասնաբաժինն ըստ երկրների հաշվարկված մեծածախ գներով



Աղբյուրը՝ De Beers, Operating and Financial Review 2011

Ադամանդի նկատմամբ պահանջարկը տեղափոխվում է Ասիա

- Չնայած ԱՄՆ-ը մնում է ադամանդի սպառման ամենախոշոր շուկան, գալիք տարիների ընթացքում աճելու է Հնդկաստանի և Չինաստանի տեսակարար կշիռը սպառման մեջ:
- 2010-2020թթ. միջին իսպլը Չինաստանում աճելու է միջինում 10%-ով, Հնդկաստանում՝ 8%-ով:
- 2000-2007թթ. ադամանդե ոսկեդենի պահանջարկը ԱՄՆ-ում աճել է մոտ 5%-ով, այնինչ Հնդկաստանում՝ 13%, իսկ Չինաստանում՝ 15%:
- Ի տարբերություն ԱՄՆ-ի, հնդկական և չինական շուկաներն ավելի քիչ են հագեցած, ինչը և ստեղծում է աճի լավ նախադրյալներ: Մասնավորապես ԱՄՆ-ում ոսկերչական արտադրանքի 52%-ը պարունակում է ադամանդ, այնինչ Հնդկաստանում ընդամենը 32%-ը, Չինաստանում՝ 29%-ը:

Միտում

1

Ադամանդի հումքի վերամշակումը և վաճառքը շարունակելու է մնալ խոշոր ադամանդագործական ընկերությունների (հիմնականում բելգիական և իսրայելական) վերահսկողության տակ: Այս ընկերություններն իրենց արտադրական հզորությունները տեղափոխում են այնտեղ, ուր առկա է էժան աշխատուժ: Մասնավորապես իսրայելական Yoshfe Diamonds International-ն ունի երկու գործարան Չինաստանում՝ ավելի քան 2,000 աշխատողով, բելգիական Eurostar-ն ունի գործարաններ Բոթսվանայում ու Չինաստանում:



Նշանակությունը Հայաստանի համար

Հայաստանի ադամանդագործության ոլորտի ընդլայնումը պայմանավորված կլինի նոր գլոբալ ընկերությունների մուտքով, որոնք կարտապատվիրեն հումքի մշակումը Հայաստան:

2

Ադամանդի մշակման ծավալներն ուղղակիորեն կախված են ոսկերչական շուկայի զարգացումից, որն իր հերթին պայմանավորված է համաշխարհային տնտեսության զարգացման և Հնդկաստանում ու Չինաստանում միջին խավի աճի դինամիկայով:



Համաշխարհային տնտեսության զարգացման տարբեր սցենարների դեպքում ադամանդի մշակման ծավալները տատանումները կարող են կազմել -5%-ից մինչև 57%: Նման անորոշությունը պարունակում է որոշակի ռիսկեր նաև ՀՀ ադամանդագործության համար:

Միտում

3

Վերջին շրջանում աղանանդագործությունը տեղափոխվում է հարավ ասիական երկրներ: 2002-2011թթ. Չինաստանի տեսակարար կշիռը համաշխարհային աղանանդագործության մեջ 6%-ից հասել է 11%-ի: Չնայած Չինաստանն ու տարածաշրջանի մյուս երկրներն ունեն ծախսային առավելություններ, սակայն տեղական տարադրամի արժևորումն ու աշխատավարձերի բարձրացումը աստիճանաբար չեզոքացնում են այն:



Նշանակությունը Հայաստանի համար

Չինաստանում, Հնդկաստանում և այլ երկրներում Հայաստանի նկատմամբ առկա ծախսային առավելությունը նվազելու է տեղական տարադրամի արժևորման հաշվին: Միաժամանակ հայկական դրամի արժեզրկման ներկայիս միտումների պահպանման պարագայում Հայաստանում աղանանդի մշակումը կարող է նորից դառնալ գրավիչ արտասահմանյան վերամշակողների համար:

4

Աղանանդ հանքարդյունահանող երկրների օրենսդրությունը պահանջում է աղանանդի հումքի որոշակի մասը վերամշակել տեղում: Արդյունքում շատ վերամշակող ընկերություններ ստիպված են հիմնել մասնաճյուղեր այդ երկրներում:



Նշված օրենսդրական սահմանափակումը սպառնում է բարձրացնել արդյունահանող երկրների տեսակարար կշիռը վերամշակման մեջ, նույնիսկ եթե վերջինս այնտեղ ավելի ծախսատար է: Մա կարող է սահմանափակել Հայաստանի հնարավորությունները թե՛ պատվերներ գտնելու և թե օտարերկրյա ներդրումներ ներգրավելու հարցում: Մասնավորապես Ռուսաստանում գործող սահմանափակումները թույլ չեն տալիս տեղի ընկերություններին վերամշակման զգալի ծավալներ արտապատվիրել այլ երկրներ, այդ թվում Հայաստան:

Միտում

5

Աղամանդագործության ոլորտի գործունեությունը սերտորեն կապված է մասնագիտացված ֆինանսավորման համակարգի հետ:



Նշանակությունը Հայաստանի համար

Մեփական հումքով աշխատող տեղական ընկերությունների գործունեությունն անհնար է առանց հատուկ վարկավորման համակարգի առկայության:

Մոտ 100 աշխատողով գործարանին անհրաժեշտ կլինի տարեկան 1-1.4 մլն ԱՄՆ դոլար գումարով շրջանառու միջոցներ միայն հումքի ձեռքբերման համար):

6

Աղամանդի հումքի արդյունահանումը և վաճառքը խիստ կենտրոնացված է սակավաթիվ խաղացողների ձեռքում: Այս փաստը թույլ է տալիս նրանց վերահսկել առաջարկն ու շուկային թելադրել գներ:

Մինչև 2020թ. սպասվում է աղամանդի պահանջարկի ավելցուկ առաջարկի նկատմամբ, որի արդյունքում հումքի հասանելիությունը դառնում է կրիտիկական վերամշակողների համար:



Հայաստանի համար խիստ կարևորություն է ստանում մուտքը հումքի առաջնային շուկաներ, կամ համագործակցություն առաջնային շուկաներում աշխատող գնորդների հետ:

Հայաստանի համար առաջնային խնդիրներից պետք է լինի Ռուսաստանի հետ երկարաժամկետ պայմանավորվածությունների ձեռք բերումը հումքի ապահովման տեսանկյունից:

Միտում

7

Չնայած ԱՄՆ-ը մնալու է մշակված ադամանդի ամենախոշոր սպառող՝ աճելու են զարգացող երկրների (Հնդկաստան, Չինաստան) շուկաների կշիռները:



Նշանակությունը Հայաստանի համար

Սեփական հումքով աշխատող տեղական վերամշակողների համար անհրաժեշտություն է առաջանում կապեր հաստատել Հնդկաստանի և Չինաստանի ոսկերչական ընկերությունների հետ:

8

Ոլորտի զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն ադամանդի բորսաները: Աշխարհին խոշորագույն բորսաները գտնվում են Նյու Յորքում, Բեյլգիայում, Իսրայելում, Հնդկաստանում, Չինաստանում: Դրանցով է անցնում ադամանդի վաճառքի գերակշիռ մասը:



Չնայած Հայաստանում արդեն եղել են բորսաներ ստեղծելու անհաջող փորձեր, այն անհրաժեշտ է ոլորտի զարգացման համար: Այնուամենայնիվ բորսայի անհրաժեշտությունը կառաջանա արդյունաբերության զգալի ծավալների դեպքում, ինչը հնարավոր է ապահովել օտարերկրյա ներդրումների միջոցով: Բորսան իր հերթին, կնպաստի տեղական ընկերությունների զարգացմանը:

Միտում

9

Աղանանդագործության կենտրոնների ձևավորման կարևոր նախադրյալներն են պարզ և արտոնյալ հարկային և մաքսային համակարգը:

Նման պայմաններ ապահովելու համար որոշ երկրներ ստեղծել են հատուկ ազատ տնտեսական գոտիներ (Հնդկաստան, Արաբական Միացյալ Էմիրություններ, Թայլանդ, Շրի Լանկա)

Նշանակությունը Հայաստանի համար

Չնայած արտոնյալ հարկային և մաքսային իրավական դաշտի առկայությանը՝ աղանանդ վերամշակողները առնչվում են որոշ վարչարարական խոչընդոտների:

Կառավարությունն այստեղ պետք է իրականացնի բիզնեսին միտված քաղաքականություն՝ օպերատիվ վերացնելով այդ խոչընդոտները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՂԱՄԱՆԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ

Առկա արտադրական կարողություններ

- Հայաստանը խորհրդային ժամանակաշրջանում ադամանդի վերամշակման կենտրոններից էր:
- 1973թ. «Սապֆիր» արտադրական միավորման կազմում բացվել է առաջին վերամշակման արտադրամասը, իսկ 1976թ.ին հիմնվեց «Շողակն» գործարանը՝ տարեկան 140,000 կարատ վերամշակման հզորությամբ:
- Զարգացման պիկային տարիներին ոլորտի արդյունաբերական անձնակազմի թիվը հասել է մինչև 3,000-ի:
- Հայ վարպետների աշխատանքը մեծ համբավ ունի: Որոշ հայկական ընկերություններում իրականացվել է ադամանդի ամենաբարձր որակի «զերազանց» (excellent) կարգի մշակում:

Միջուռք և օտարերկրյա ներդրումներ

- Հայաստանում ադամանդագործության ոլորտի վերականգնման խթան հանդիսացավ 1992թ ադամանդների ոլորտում հայտնի գործարար Արսլանյանների ներդրումը:
- Նրանց միջնորդությամբ Հայաստան մուտք գործեցին նաև այս ոլորտի այլ հեղինակավոր ընկերություններ (Tashe, Rosy Blue):
- Ոլորտի զարգացման կարևորագույն իրադարձություն էր 2000թ.-ին ոլորտի առաջատար Lev Levaev Diamonds ընկերության մուտքը Հայաստան:

Հումքի առաջնային աղբյուրի մատչելիություն

- Հայկական ադամանդագործության զարգացմանն էապես նպաստել է հումքի առաջնային աղբյուրի հասանելիությունը:
- Մինչև 2003 թվականը հայ-ռուսական միջկառավարական պայմանագրի շրջանակում հայկական ընկերություններին տրված քվոտան, այնուհետև 2007թ-ից հայկական ընտրված ընկերություններին հումքի հատուկ պայմաններով գնման պայմանավորվածություններն ապահովել են Հայաստանում վերմշակված հումքի զգալի մասը:

Հայաստանը բնական ադամանդի մշակման կենտրոններից էր նախկին ԽՍՀՄ տարածքում, որն անկախությունից հետո արագ աճ գրանցեց օտարերկրյա ներդրումների շնորհիվ:

1970-1990թթ

1973թ.-ին Նոր Հաճնում «Մապֆիր» արտադրական միավորման կազմում բացվում է ադամանդի վերամշակման արտադրամաս, որը հետագայում դառնում է ԽՍՀՄ յոթ խոշորագույն գործարաններից մեկը, 1986թ.-ին թողարկելով 70 մլն դոլարի արտադրանք:

1990-1998թթ

- 1992թ. Արսլանյանները հիմնադրում են «Լորի» ադամանդի մշակման գործարանը
- Մասնավորեցվում են հայկական ադամանդագործական ձեռնարկությունները
- 1997թ. ՀՀ կառավարության և ռուսական ALROSA-ի միջև կնքվում է նպաստավոր պայմաններով հումք ներմուծելու պայմանագիր(տարեկան 300-500 հազ. կարատ):


1999-2004թթ

- Հայաստանում իրենց գործունեությունն են սկսում աշխարհահռչակ ընկերություններ Rosy Blue-ն, Lev Levaev Diamonds, Tache և այլն:
- 2002թ. դադարեցվում է ALROSA-ի հետ պայմանագիրը:
- 2002թ. ՀՀ ադամանդագործության զարգացման գագաթնակետն է՝ 370 հազ. մշակված կարատ


2005-2011թթ

- Տնտեսական ճգնաժամը բացասական է շքեղության ապրանքների պահանջարկի վրա՝ նվազեցնելով նաև մշակված ադամանդի պահանջարկը:
- 2007թ. Ռուսաստանում արգելվում է աշխատել «հումք վերամշակման համար» (tolling) սխեմայով:
- 2008թ. գրանցվում է վերջին տասը տարվա դոլարի ամենացածր փոխարժեքը՝ 306դրամ:


Մշակված ադամանդի ծավալները
Հզ. կարատ



Արդյունաբերատարական աշխատողների միջին ցուցակային թվաքանակը



Ձեռնարկությունների թվաքանակը*



Հայաստանի ադամանդագործության ոլորտում որոշակի աշխուժացում է նկատվում խորը անկումից հետո:

- Հայաստանի ադամանդագործության զարգացման գագաթնակետը 2002-2003թթ.-երն են, որն հիմնականում պայմանավորված էր Շոդակն ընկերության գործարկմամբ:
- 2002թ. մշակված ադամանդի ծավալները հասնում են առավելագույն արժեքին՝ 370 հազ. կարատ: Մինչև 2009թ. ցուցանիշը նվազում է տարեկան յոթ անգամ, հասնելով 50 հազ. կարատի:
- Այդ տարիներին գրանցվեց նաև զբաղվածության առավելագույն մակարդակը:
- 2011թ.-ին Հայաստանի ադամանդագործությունը աշխատում էր իր արտադրական հզորությունների 17.5%-ի չափով (2002թ.-ի համեմատ): Ոլորտի կրճատման արդյունքում նկատվեց նաև աշխատողների զգալի արտահոսք արտերկիր՝ Ռուսաստան, Կանադա, Աֆրիկա:
- 2010-11թ.-ին Հայաստանում գրանցված արտադրության որոշակի աճը պայմանավորված էր համաշխարհային շուկայի աշխուժացմամբ և ՀՀ դրամի արժեզրկմամբ:
- Այս ժամանակահատվածում ադամանդագործության դինամիկայի վրա ազդել են հինգ հիմնական գործոններ՝ օտարերկրյա ներդրումները, դոլարի փոխարժեքը, ռուսական հումքի մատչելիությունը, հարկային ու մաքսային վարչարարությունը և համաշխարհային ճգնաժամը:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

*ՀՀ ԱՎԾ մոնիտորիգում ներգրավված ընկերությունների թվաքանակը, որը ներառում է հիմնական արդյունաբերական ընկերությունների գերակշիռ մասը:

**Փոխարժեքի
տատանումներ**

Դրամի արժևորումն էական ազդեցություն է ունեցել ադամանդագործության ոլորտի վրա, քանի որ ծախսերի մոտ 80%-ը դրամով կատարվող աշխատավարձային ծախսերն, իսկ ընկերությունները վճարվել են դոլարով մշակվող մեկ կարատի դիմաց: 2003-2008թթ. ընթացքում ՀՀ դրամն արժևորվել է մոտ 50%-ով, իսկ արտադրության ծավալները նվազել՝ 65%-ով:

Վիճակագրական թեսթերը ցույց են տալիս, որ 95% հավանականությամբ փոխարժեքն ու վերամշակման ծավալները (կարատներով), գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ: Ընդ որում, այս ազդեցությունը ի հայտ է գալիս մեկ տարվա լազով՝ օրինակ, 2001թ.-ի փոխարժեքն ազդում է 2002թ.-ի արտադրության ծավալների վրա: Լազով փոխարժեքի ու բնեղեն արտահայտությամբ թողարկման միջև կորելյացիայի գործակիցը 0.87 է(նշանակալի է 0.01 աստիճանով):

**Օտարերկրյա
ներդրումներ**

«Lev Levaev Diamonds» ընկերությունը, 2000թ. ձեռք բերելով «Շոդակն» գործարանը, դառնում է ոլորտի խոշորագույն արտադրողը: Այստեղ ժամանակին աշխատել են մինչև 1,800 մարդ, կամ ճյուղում զբաղվածների գրեթե կեսը: Սակայն 2007թ.-ից «Շոդակն» դատական վեճի մեջ է ՊԵԿ-ի հետ, ինչի արդյունքում նույն տարվանից դադարեցվել է ձեռնարկության գործունեությունը. վեճը մինչ օրս դեռ լուծված չէ:

**Հումքի առաջնային
աղբյուրի
մատչելիություն**

ՀՀ կառավարության պայմանավորվածությունը Ռուսական «Ալքոսայի» հետ նպաստավոր պայմաններով հայկական ընկերություններին հումք մատակարարելու մասին(1997թ.), հնարավորություն տվեց հայկական ընկերություններին ստեղծել ծախսային առավելություններ մյուս երկրների նկատմամբ: Արդյունքում բացվեցին բազմաթիվ փոքր ընկերություններ՝ տեղական կապիտալով, իսկ համաշխարհային խաղացողների համար ստեղծվեց հնարավորություն Հայաստանի միջոցով ձեռք բերել ռուսական հումք: Արդեն 2002թ.-ց արտոնությունները վերանում են, սկսած 2006թ.-ից Ռուսաստանից ներմուծումը գրեթե զրոյանում է մինչև 2010թ.:

Համաշխարհային ճգնաժամ

Համաշխարհային ճգնաժամի արդյունքում նվազեց պահանջարկը ոսկերչության և ադամանդի նկատմամբ, որի արդյունքում կրճատվեցին ադամանդի մշակման ծավալները: 2009թ. աշխարհում ադամանդի վերամշակման ծավալները կրճատվեցին 36%-ով: Ոլորտը սկսեց վերականգնվել 2010թ-նից:

Հարկային և մաքսային վարչարարություն

Ոլորտի ազատականացումը նույնպես նպաստել է զարգացմանը: Մասնավորապես ադամանդի ներմուծումն ու արտահանումն ազատված է մաքսատուրքերից, իսկ 2001թ.-ից նաև ավելացված արժեքի հարկից:

Վերջին տարիներին խնդիրներ են ծագել «ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով աշխատող ընկերությունների մոտ կապված հումքի մշակման կորուստների գնահատականների և ԱԱՀ-ի վերադարձի հետ:

Հայաստանի ադամանդի մշակման գերակշիռ մասն իրականացվում է օտարերկրյա ընկերությունների մասնաճյուղերի կողմից

- 2011թ.-ին Հայաստանում բնական մշակված և չմշակված ադամանդի առուվաճառքի, ներմուծման, արտահանման լիցենզիա է ունեցել ինը **ադամանդագործական** ընկերություն:
- Ադամանդի վերամշակում են իրականացնում 7 ընկերություն՝ «Լորի», «Դայմոթեք», «Արևակն», «Ֆայրսթուն», «Դայմոնդ», «ԷՅ ԷԼ ԹԻ», «Անդրանիկ», «Ագատես»*:
- Ընկերությունների հիմնական մասն աշխատում են պատվիրատուի հումքով, հատկապես օտարերկրյա ընկերությունների կողմից հիմնված վերամշակման գործարանները:
- Որոշ ընկերություններ աշխատել են սեփական միջոցների հաշվին ձեռք բերված հումքով, որի բաժինը սակայն չափազանց փոքր է եղել:
- 2011թ.-ին հայկական 9 ընկերություններ են գնումներ կատարել «Ալտոսա» ընկերությունից ՀՀ կառավարության և «Ալտոսա» ընկերության միջև ձեռք բերված պայմանավորվածության շրջանակում:
- Մեկ ընկերություն իրականացնում է հումքի տեսակավորման գործունեություն:

Վերամշակող հիմնական ընկերությունները

«Լորի»

Անկախ Հայաստանի առաջին ադամանդագործական ընկերությունն է, հիմնադրված 1992թ. Արսլանյանների կողմից: Այսօր սեփականատերերն են Արսլանյաններն ու Rosy Blue-ն: Պիկային տարում մշակել է ամսեկան 10-15 հազար կարատ, ուներ 450 աշխատող: Այսօր ընկերություն աշխատում են մոտ 150 մարդ: Աշխատում են հիմնականում «հումք վերամշակման համար» սկզբունքով: Ընկերությունն ունի «excellent» մշակման որակի առանձնացված արտադրամաս:

«Դայմոթեք»

Հիմնադրվել է 1999թ.-ին, պատկանում է Rosy Blue ընկերությանը: Պիկային տարում ունեցել են ամսեկան մինչև 15,000 կարատ մշակում, 750 աշխատող: Այժմ ունի մոտ 100 աշխատող և ամսեկան մոտ 3,000 կարատի մշակում: Աշխատում են հիմնականում սեփականատիրոջ կողմից մատակարարվող հումքով, սակայն ունենում են և սեփական պատվերներ:

«Արևակն»

Հիմնադրվել է 2000թ. և հանդիսանում է Tache ընկերության սեփականություն: Ունեցել են 170 աշխատող և ամսեկան մինչև 4,000 կարատ մշակում լավագույն տարում, ներկայումս մոտ 130 աշխատող և 3,000 կարատ մշակում:

«Շողակն»


Մասնավորեցվել է Լև Լևակի կողմից 2000թ.-ին, նույն տարում էլ սկսել է աշխատել: 2005թ.-ին եղել է արտադրության առավելագույն մակարդակը՝ ամսեկան մինչև 35,000 կարատ մշակմամբ և 1,800 աշխատողով: Աշխատել է սեփականատիրոջ հումքով: Գործարանը դադարեցրել է արտադրությունը 2007թ.-ին:

«Ֆայերսթուն (Ֆայրսթար) դայմոնդ»

Հնդկական խոշորագույն Firestone Diamond ընկերության մասնաճյուղն է Երևանում: Բացվել է 2009թ.-ին, DCA ընկերությունից վարձակալելով արտադրական տարածքներ: Չնայած նախնական ներդրումային ծրագրով նախատեսված էր ստեղծել մինչև 3,000 աշխատատեղ, 2011թ.-ին ընկերությունում աշխատում է մոտ 100 մարդ: Ներկայումս ընկերությունը գրեթե չի գործում հումքի բացակայության պատճառով:


*Ամենամեծ հզորություններով «Շողակն» գործարանը ներկայումս պարապուրդի մեջ է՝ ՊԵԿ-ի հետ առաջացած դատական վեճի պատճառով

Ադամանդի հումքի ներմուծման ծավալները
Հզ. կարատ



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, (HS 710231)

Հայաստան հումքի ներմուծման կառուցվածքն ըստ երկրների
Բնեղեն արտահայտությամբ, %




Աղբյուրը՝ UN Comtrade (HS 710231)

Հայաստանում մշակվող ադամանդի հումքը հիմնականում ներմուծվել է Բելգիայից, Իսրայելից և Ռուսաստանից:


- Հայաստանում մշակվող ադամանդի հումքը հիմնականում ներմուծվել է վերամշակող ընկերությունների սեփականատեր ընկերությունների երկրներից Բելգիա և Իսրայել:
- Ռուսաստանյան հումքի կշիռը մեծ է եղել միայն 2001-02 և 2010-2011թթ. ընթացքում՝ Հայաստանի կառավարության ռուսական կողմի հետ պայմանավորվածությունների շնորհիվ:
- Ռուսական հումքի ներկրումն էապես կրճատվել է 2003-2009թթ. Ռուսաստանում ադամանդի ոլորտի ազատականացման արդյունքում, որի արդյունքում Հայաստանը զրկվում է նպաստավոր պայմաններով Ռուսաստանից հումք ներմուծելու հնարավորությունից:
- Ռուսական հումքի գների փոփոխությունները կախված են բարդ վարչարարական ընթացակարգերից և հաճախ առաջանում են տարբերություններ միջազգային շուկայի գների հետ: Ներկայումս Ռուսաստանում չեն իրականացրել գների համապատասխանեցում միջազգային շուկայի գներին, որի արդյունքում այն մոտ 10%-ով ավելի բարձր է:
- Իսրայելից հումքի ներմուծումները կապված էին հիմնականում «Շողակն» գործարանի գործարկմամբ, որը զրոյացավ ընկերության գործունեության դադարեցման արդյունքում:

Մեկ կարատի վերամշակման արժեքը ԱՄՆ դոլար



Աղբյուրը՝ Bain and C, ոլորտի արտադրողներ

Մեկ կարատի մշակման ծախսերի կառուցվածքը, 2011թ. գնահատական



Աղբյուրը՝ Bain and C, ոլորտի արտադրողներ, այլ



Հայաստանում աղամանդի մշակման ծախսերի մակարդակը հնարավորություն է տալիս մրցակցել առավել բարձրարժեք, միջին չափի քարերի մշակման սեգմենտում:

- Հայաստանում աղամանդի մշակման ծախսերով զիջում է Հնդկաստանին, Չինաստանին և Թայլանդին: Մակայն գնային առավելությունը զգայի է այլ վերամշակող կենտրոնների համեմատ:
- Աղամանդի մշակման ոլորտում աշխատավարձը հիմնական ծախսային հոդվածն է: Հայաստանում աշխատավարձի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ բավական բարձր է, որը պայմանավորված է հիմնականում առավել մեծ չափերի քարերի և առավել որակյալ մշակմամբ:
- Ծախսերի նման մակարդակի արդյունքում հայկական ընկերություններն հիմնականում մասնագիտացել են միջին չափերի աղամանդի մշակման սեգմենտում (0.5-2 կարատ):
- Ըստ որոշ փորձագետների, Չինաստանում աստիճանաբար բարձրանում է աղամանդի մշակման արժեքը, ինչի արդյունքում միջազգային խոշորագույն խաղացողները լրջորեն դիտարկում են պատվերների այլ երկրներ տեղափոխումը:
- Չմշակված աղամանդի գներն աճում են ավելի արագ, քան մշակվածինը՝ բացասաբար անդրադառնալով աղամանդի մշակման և արժեշտթայի հետագա փուլերի շահութաբերության մարժանների վրա: Չմշակված աղամանդի գների ինդեքսը 2011թ.-ին 2009թ.-ի համեմատ աճել է 65%-ով, մշակվածինը՝ 23%-ով:
- Մեծ քարերի գինն աճում է ավելի արագ քան փոքրերինը: Հինգ կարատանոց մշակված աղամանդի գների ինդեքսը 2006-2011թթ. աճել է 17%-ով, երեք կարատանոց քարինը՝ 10%-ով, մեկ կարատինը՝ 5%-ով, իսկ կես կարատինը՝ 0%-ով:

Սկսած 2003 թ.-ից ՀՀ կառավարությունն ակտիվորեն քայլեր է ձեռնարկել ոլորտի աջակցության ուղղությամբ՝ մշակելով ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրեր, որոնք դեռևս մասամբ են իրագործվել:

Հայաստանում ադամանդագործության զարգացումը խթանելու համար ՀՀ Կառավարության կողմից 2003թ.-ին ընդունվել է «Ակնագործության և ոսկեգործության ոլորտի զարգացման 2005-2007 միջնաժամկետ ծրագիրը», որի հիման վրա 2009թ.-ին հաստատվել է նոր ծրագիր:

2009-2011 ծրագրով ադամանդագործության ուղղությամբ նախատեսված են եղել հետևյալ հիմնական գործողությունները.

Իրավական/հարկային դաշտի և վարչարարության բարելավում	Հիմնականում իրականացվել է, որոշ գործընթացներ ընթացքում են
Հայաստանի ազատ տնտեսական գոտու տարածքում/Զվարթնոց օդանավակայանում կամ Նոր Հաճնում/ մշակված և անմշակ ադամանդի շուկայի /բորսայի/ ստեղծում(2011)	Զվարթնոց միջազգային օդանավակայանների օպերատորի հետ կնքված հուշագրում նախատեսված է ոսկերչության և ադամանդագործության ազատ տնտեսական գոտու հիմնում, որի շրջանակում ներկայումս բանակցություններ են վարվում Հայ ոսկերիչների միության կողմից:
Թանկարժեք քարերի սերտիֆիկացման կենտրոնի հիմնում, այդ թվում՝ Հայաստանում միջազգային ճանաչում ունեցող ընկերության/GIA/ մասնաձյուղի հիմնում	Հայաստանում գործում է «Զանգ» հեմոլոգիական գիտատնտեսական լաբորատորիան, իսկ մշակման ծավալների կրճատման պատճառով GIA-ի մասնաձյուղի բացումը Հայաստանում համարվել է ոչ նպատակահարմար:
Ձեռնարկել միջոցներ ադամանդի հումքի գնման նոր շուկաների ձևավորման ուղղությամբ	Չի իրականացվել ֆինանսավորման բացակայության պատճառով
Գյումրիում ստեղծվող ազատ տնտեսական գոտում ներգրավել օտարերկրյա ադամանդագործական ընկերություններին	Գյումրիում ազատ տնտեսական գոտի չի ստեղծվել

Հայաստանում առկա է ոլորտի զարգացման համար բարենպաստ օրենսդրական դաշտ, սակայն վերջին տարիներին խնդիրներ են առաջացել կապված ավելացված արժեքի հարկի վերադարձի հետ կապված

- Հայաստան մշակված և չմշակված ադամանդի արտահանումն ու ներմուծումն ազատված է մաքսատուրքից:
- Թանկարժեք մետաղների և քարերի իրացումն ազատված է ավելացված արժեքի հարկից:
- 2001թ.-ից ադամանդի առևտուրը ենթակա է լիցենզավորման՝ պարզեցված ընթացակարգով:
- 2004թ.-ից ոլորտն ազատված է շահութահարկի կանխավճարի 1% նվազագույն շեմից:

Երկիր	ԱԱՀ	Մաքսատուրք	Այլ
Չինաստան	Շանհայի բորսայի միջոցով վաճառված տեղական չմշակված և մշակված ադամանդներն ազատված են ԱԱՀ-ից: Բորսայից դուրս վաճառքները հարկվում են 17% դրույքով: 4% ԱԱՀ դրույք մշակված ադամանդի ներմուծման վրա: 0% դրույք չմշակված ադամանդի ներմուծման դեպքում, եթե արվել է Շանհայի բորսայի միջոցով:	0%	5% սպառման հարկ(consumption tax), գանձվում է միայն վաճառքի փուլում
Հնդկաստան	0% ԱԱՀ Սուրաթի ադամանդագործների համար	2% մաքսատուրք մշակված ադամանդի նկատմամբ, 0%՝ չմշակվածի համար	
Իսրայել	0% (եթե վաճառվում է ճյուղի ներսում)	0%	Վաճառքների 0.5% -ը գանձվում է որպես շահութահարկի կանխավճար

Հայաստանում գործում է թանկարժեք քարերի գնահատման և գիտաուսումնական կենտրոն

- «Զանգ» գիտաուսումնական հեմմոլոգիական լաբորատորիան հիմնադրվել է 1997թ.-ին Արթուր Զանգինյանի կողմից: Նա վերապատրաստվել է Ամերիկյան հեմմոլոգիական ինստիտուտում(GIA): «Զանգը» զբաղվում է թանկարժեք քարերի գնահատմամբ, սերտիֆիկացմամբ, գիտական և ուսումնական գործունեությամբ:
- 2000թ.-ից «Զանգն» իրականացնում է հեմմոլոգիայի ուսումնական ծրագրեր և մինչ այժմ ունի մոտ 400 շրջանավարտ Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից:

Հայաստանում առկա է թանկարժեք քարերի փոխադրումների համար անհրաժեշտ ծառայությունները

- «Կուրիեր Հայկ» ընկերությունը զբաղվում է ադամանդի տեղափոխությամբ, միջազգային հեղինակավոր Brinks ընկերության ներկայացուցիչն է Հայաստանում:
- Ադամանդի տեղափոխումը կատարվում է «դոնից դուռ» սկզբունքով: Բեռն ապահովագրված է տեղափոխման ամբողջ ընթացքում:

Ադամանդագործության հաստոցների տեղական արտադրություն

- Ադամանդագործության բումի տարիների որոշ տեղական ընկերությունները մասնագիտացել էին հաստոցների արտադրության բնագավառում, և նույնիսկ արտահանել հաստոցներ:

Հայաստանում բորսայի ստեղծման մասնավոր նախաձեռնությունը կյանքի չի կոչվել

- Նախաձեռնությունը եղել է Լև Լևակի կողմից, ըստ որի նախատեսվում էր «Շոդակն» գործարանի տարածքում հիմնել ադամանդի բորսա:
- Չնայած նախապատրաստական որոշ աշխատանքների իրականացմանը նախաձեռնությունը չի իրագործվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՂԱՄԱՆԴԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեսլական

Մինչև 2020թ. Հայաստանը դարձնել ադամանդի մշակման և առևտրի տարածաշրջանային կենտրոն, որը մասնագիտացած կլինի միջին և մեծ քարերի բարձրակարգ մշակման սեզմենտում:

Ռազմավարության առաջնային խնդիրը ոլորտի մասշտաբայնացումն է, որը կարճաժամկետ հեռանկարում կիրականացվի օտարերկրյա նոր ընկերությունների ներգրավման շնորհիվ: Այն ենթադրում է օտարերկրյա ընկերությունների կողմից սեփական արտադրությունների հիմնում և/կամ պատվերների տրամադրում գործող ընկերություններին:


Երկարաժամկետ հեռանկարում ռազմավարության նպատակն է Հայաստանը դարձնել ադամանդի մշակման և առևտրի տարածաշրջանային կենտրոն, որտեղ զգալի կշիռ կկազմեն տեղական կապիտալով վերամշակող և ադամանդի առևտրով զբաղվող ընկերությունները:

Արժեքային առաջարկ

Ադամանդագործության ոլորտում Հայաստանը պետք է դիրքավորվի, որպես բարձրակ տաշվածքի, վստահելի գործընկերության, ամենաարտոնյալ և կայուն կարգավորման և հարկային դաշտ ունեցող երկիր:

Հայաստանի արժեքային առաջարկի տարրեր


- Որպես ադամանդի բարձրորակ մշակման կենտրոնի համբավը և ավանդույթները
- Ադամանդի մշակման առկա մեծ հզորությունները
- Ռուսական հումքի հասանելիությունը և ԱՊՀ շրջանակում գործող ազատ առևտրի գոտին
- Ադամանդագործության և ոսկերչության ոլորտում միջազգային մասշտաբով գործող Սփյուռքի ներկայացուցիչներ
- Գլոբալ ընկերությունների ներկայությունը Հայաստանում
- Օդային տրանսպորտի արդիականացված ենթակառուցվածք, «Զվարթնոց» օդանավակայանին կից ազատ տնտեսական գոտու ստեղծում
- Լավ հարաբերություններ տարբեր կրոնական դավանանքով տարածաշրջանային երկրների հետ
- Ոսկերչության ավանդույթներ և զարգացման մեծ պոտենցիալ




Ադամանդագործության ոլորտում Հայաստանում ձևավորված կարողությունները, իրավական և ֆիզիկական ենթակառուցվածքը գրավիչ պայմաններ են օտարերկրյա ընկերությունների ներգրավման համար:

Հայաստանի ադամանդագործության զարգացմանը նպաստող միտումներ

- Դրամի արժեզրկում, որն հայ արտադրողներին հնարավորություն տվեց վերականգնել գնային մրցունակությունը 2006-2009թթ. արժևորումից հետո:
- Չինաստանում արտադրական ծախսերի շարունակվող աճ, որի արդյունքում նկատվում է գլոբալ ընկերությունների կողմից Չինաստան տրվող պատվերների դեպի այլ երկրներ ուղղորդում:
- Ըստ ոլորտի միջազգային փորձագետների մոտակա 10 տարիներին ակնկալվում է հումքի պակասորդ, որը կրիտիկական է դարձնում հայկական ընկերությունների համար ռուսական հումքի մատչելիության գործոնը:
- Հայկական ոսկեգործության զարգացում, որը ապագայում հնարավոր է պահանջարկ ստեղծի տեղական արտադրության ադամանդների համար:



Առկա միտումները հավելյալ հնարավորություններ են ստեղծում Հայաստանի ադամանդագործության զարգացման համար




Կարճաժամկետ հեռանկարում առավել իրատեսական է ոլորտի արագ ընդլայնումը նոր օտարերկրյա ընկերությունների Հայաստան ներգրավման միջոցով:

Զուգահեռաբար այն կնպաստի տեղական կապիտալով ընկերությունների կարողությունների զարգացմանը.

- օտարերկրյա ընկերությունների պատվերներ
- ոլորտի շրջանառության աճի արդյունքում ֆինանսական և այլ ենթակառուցվածքների ձևավորման համար տնտեսական հիմքերի ստեղծում
- երկրի որպես ադամանդի վերմշակման կենտրոնի համբավի ձևավորում, որը կոյուրիինացնի ինչպես նոր ընկերությունների ներգրավումը, այնպես էլ հայկական արտադրանքի վաճառքը



Հայաստանի ադամանդագործության ոլորտի զարգացումը ենթադրում է երկու հիմնական փուլեր:



Ռազմավարական նախաձեռնություններ

1. Բանակցել առաջատար ընկերությունների հետ Հայաստանում ադամանդի վերամշակում իրականացնելու համար թիրախելով բելգիական, իսրայելական և ռուսական ընկերություններ
2. Հիմնել մասնագիտացված ազատ տնտեսական գոտի Զվարթնոց օդանավակայանի տարածքում
3. Կազմակերպել ադամանդագործության և ոսկերչության բիզնես ֆորում թիրախ երկրներում և Հայաստանում
4. Կառավարական մակարդակով բանակցել Ռուսաստանի հետ հումքի ապահովման երկարաժամկետ պայմանավորվածության ձևերը բերման և ռուսական ադամանդի մշակումն Հայաստան արտապատվիրման հնարավորություններն ընդլայնելու ուղղությամբ

1. Ադամանդի տարածաշրջանային առևտրի կենտրոնի ստեղծում՝ անհրաժեշտ ենթակառուցվածքով մեկ վայրում («Զվարթնոց» օդանավակայանի տարածքում ստեղծվող ազատ տնտեսական գոտում)
2. Մասնագիտացված վարկավորման մեխանիզմի ապահովում՝ ներգրավելով միջազգային բանկային հաստատություն (օրինակ՝ Antwerp Diamond Bank, ABN Amro)
3. Հայաստանում ոսկերչության և ադամանդի տարածաշրջանային նշանակության ամենամյա ցուցահանդեսի կազմակերպում
4. Մասնակցություն հիմնական միջազգային ցուցահանդեսներին

1

Մտաչելի հումքի ապահովում

Ռուսական ադամանդի հումքի ձեռք բերման պայմանների բարելավում.

- Ռուսական ադամանդի հումքի Հայաստան արտահանման ժամանակ (ներառյալ արտահանում վերամշակման համար ռեժիմով գործարքները) առավել արտոնյալ պայմանների* կիրառման նպատակով բանակցությունների վարում հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում և ռուսական ադամանդի հումքի Հայաստան արտահանման արտոնյալ պայմանների կիրառման շուրջ համաձայնագրի ստորագրում ՀՀ և Ռուսաստանի կառավարությունների միջև:
- Սա կարող է խթանել նաև ռուսական ադամանդ վերամշակող ընկերությունների համագործակցության ընդլայնմանը:

**Ներկայումս Ռուսաստանից հումքի արտահանման վրա կիրառվում է 6.5% արտահանման մաքսատուրք:*

2

Ադամանդագործական ընկերությունների ներգրավում

Ադամանդագործության ոլորտում Սփյուռքի և գլոբալ ընկերությունների մասնաճյուղերի հիմնման/պատվերների ներգրավում.

- Բելգիայում ադամանդագործության ոլորտի գլոբալ ընկերությունների հետ բիզնես ֆորումի կազմակերպում Սփյուռքի ներկայացուցիչների աջակցությամբ: Ֆորումը կուղեկցվի նաև անհատական բանակցություններով:
- Հայաստանում ադամանդագործության ոլորտի գործարար համաժողովի անցկացում և անհատական բանակցություններ ոլորտի ռուսական և այլ գլոբալ ընկերությունների հետ:

Նշում. Ռուսաստանի ադամանդի վերամշակող արդյունաբերության հասույթը գնահատվում է շուրջ 1.5-1.6 մլրդ ԱՄՆ դոլար, որն ըստ կանխատեսումների կհասնի 1.8 մլրդ. դոլարի 2015թ.-ին (Frost & Sullivan): Ռուսաստանում վերամշակվող ադամանդի 1-2 % -ի Հայաստան ներգրավումը կարող է ապահովել Հայաստանի ադամանդագործության ոլորտի շրջանառության 20-40% աճ:

3

Ներդրումների ֆինանսական աջակցություն

Ընկերությունների ներդրումային ծրագրերի երկարաժամկետ ֆինանսավորման սուբսիդավորում

4

Ոլորտի առաջնորում

Ոլորտի առաջնորման ընդհանուր ինտերնետային պորտալի գործարկում

Նշում. ռազմավարական նախաձեռնություններ 3-ը և 4-ը մանրամասն ներկայացված են Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտների գործողությունների ծրագրում (համապատասխանաբար 5.1 և 6.3 գործողություններ)

Օտարերկրյա նոր ընկերությունների ներգրավում

Այն ենթադրում է համակարգված և հետևողական աշխատանք, որը կներառի նույնիսկ անհատական բանակցություններ պոտենցիալ ներդրողների հետ ամենաբարձր մակարդակով


- Թիրախ ընկերությունների ընտրություն ոլորտի առաջատար հանրաճանաչ ընկերություններ (նախնական ցանկը Հավելված 1-ում)
- **Հստակ ձևակերպված արժեքային առաջարկ և պրոֆեսիոնալ ներկայացում թիրախ ընկերություններին**
- Սփյուռքի կապերի օգտագործում



Օտարերկրյա ընկերություններին ուղերձի կիզակետում պետք է լինեն հետևյալ առավելությունները, որոնք կունենան ընկերություններն Հայաստանում աշխատելու դեպքում.


1. Արտոնյալ իրավական և հարկային դաշտ, ինչպես նաև պետական կառավարման բարձր մակարդակով երաշխիք ադամանդագործության կարգավորման դաշտի չվատթարացման վերաբերյալ առնվազն 5-7 տարիների ընթացքում
2. Ռուսական հումքի մատչելիության ապահովում միջկառավարական պայմանավորվածությունների շրջանակում
3. Գլոբալ ընկերությունների աշխատանքի երկարաժամկետ և դրական փորձ (Լորի ընկերությունը 20 տարի աշխատել է Հայաստանում և երբևէ չի դադարեցրել գործունեությունը)
4. Տաշված ադամանդի Ռուսաստան (ԱՊՀ տարածաշրջանում ամենախոշոր ոսկերչական արտադրություն ունեցող երկիր) արտահանման արտոնյալ պայմաններ (0% ներմուծման մաքսադրույք ի տարբերություն այլ երկրների 15%-ի)
5. Գին-որակ մրցակցային առավելություններ միջին և մեծ չափի ադամանդների մշակման բնագավառում
6. Առկա արտադրական կարողություններ և որակյալ աշխատուժ

Մշակված աղամանդի արտահանման ծավալների գնահատում
մլն. ԱՄՆ դոլար, 2011 թվականի գներով



◆ Առավելագույն աճ ■ Չափավոր աճ ▲ Վատատեսական

Տարեկան միջին աճի տեմպ



Արտահանման թիրախների սահմանում

Առավելագույն աճի սցենարի դեպքում որպես 2020 թվականի թիրախ է վերցվել վերջին 10 տարիների ընթացքում պատմական առավելագույն ցուցանիշը (2005թ.): Որպես միջանկյալ արդյունք, 2016 թվականին ակնկալվում է մինչդեռաժամային մակարդակի վերականգնում:

Հայաստանի արտահանման զարգացման սցենարների գնահատականներում հիմք են ընդունվել աղամանդի հումքի առաջարկի կանխատեսվող զարգացումները, որոնցով համապատասխանեցվել են աճի տեմպերը յուրաքանչյուր աճի սցենարում:

Սցենարների հիմնական գործոնները

Առավելագույն աճ

Համաշխարհային տնտեսության վերականգնում և հումքի առաջարկի ընդլայնում:
Հայկական աղամանդագործների համար ռուսական հումքի մատչելիություն և համագործակցություն ռուսական աղամանդ վերամշակողների հետ:
Հայաստան գլոբալ նոր աղամանդագործական ընկերությունների ներգրավում:

Չափավոր աճ

Համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնում և ոչ նշանակալի փոփոխություն հումքի առաջարկում

Վատատեսական

Համաշխարհային ճգնաժամի նոր ալիք, որի արդյունքում կնվազի պահանջարկը ոսկերչական իրերի սպառման հիմնական շուկաներում:
(աղամանդի գլոբալ զարգացման սցենարների մանրամասները ներկայացված են 19-20 էջերում):

1

Աղամանդագործության ոլորտում ստագնացիոն իրավիճակ

Գլոբալ ճգնաժամից հետո գլոբալ շուկաների վերականգնման դանդաղ տեմպերով և երկրորդ ակիքի սպասումով պայմանավորված աղամանդի շուկայի վերականգնումը դանդաղել է և նկատվում են ստագնացիոն երևույթներ:



Արտադրող ընկերությունները ներկայումս կուտակում են պաշարներ աղամանդի շուկայում զգալի գնանկումը կանխելու համար:

Ըստ ոլորտի միջազգային փորձագետների ակնկալվում է շուկայի աշխուժացում, հիմնականում ի հաշիվ Չինաստանում պահանջարկի աճի:

2

Աղամանդի մշակման ցածր ծախսերով նոր կենտրոնների զարգացում

Ցածր ծախսերով աղամանդի մշակման նոր կենտրոններ կարող են դիտարկվել Հարավարևելյան Ասիայի երկրներից (օրինակ Վիետնամը):



Աղամանդի մշակման ավանդույթ չունեցող երկրներում ամբողջությամբ նոր արդյունաբերության ձևավորումը պահանջում է երկարաժամկետ ներդրումներ, մասնավորապես աշխատուժի զարգացում, համապատասխան իրավական դաշտի ձևավորում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Թիրախային ընկերությունների ընտրությունը կատարվել է հետևյալ հատկանիշներով.

- Ընկերությունը DTC առաջնային գնորդ է
- ներկայացված արժեզրթայի տարբեր օղակներում.
- Ունի միջազգային հեղինակություն

<p>Pluczenik Diamond company NV (Բելգիա, Անտվերպեն) Ոլորտի ամենախոշոր ներկայացուցիչներից մեկը: Վաճառքների ծավալներն հասնում են մինչև 1 մլրդ ԱՄՆ դոլ.: DTC առաջնային գնորդ է արդեն 60 տարի: Ներառված է արժեզրթայի բոլոր օղակներում՝ մեծածախ վաճառքից մինչև ոսկերչական ապրանքների արտադրություն: Ունի 3 մշակման գործարան, համագործակցում է ևս 19-ի հետ:</p>	<p>Diarough NV (Բելգիա, Անտվերպեն) Ներկա է արժեզրթայի գրեթե բոլոր օղակներում՝ մեծածախ վաճառքից մինչև ոսկերչական արտադրանքի մանրածախ վաճառք: Ունի վերամշակման գործարաններ ՀԱՀ-ում, Թայլանդում, Հնդկաստանում, Կանադայում: DTC առաջնային գնորդ է: Զբաղվում է .02 կարատ և ավել կշռով քարերի մշակմամբ:</p>
<p>Chow Tai Fook (Հոնկոնգ, Չինաստան) Վաճառքները՝ 7.3 մլրդ դոլար, 27%-ը թանկարժեք քարերով ոսկերչական իրեր: Ներկա է է արժեզրթայի բոլոր օղակներում: Rio Tinto, DTC առաջնային գնորդ է: Ունի մեկ վերամշակման գործարան Չինաստանում, երկուսը ՀԱՀ-ում:</p>	<p>Chow Sang Sang (Հոնկոնգ, Չինաստան) Վաճառքներն 2012թ.-ին՝ 2.23 մլրդ ԱՄՆ դոլար: Ներկա է արժեզրթայի բոլոր օղակներում: Ունի ոսկերչական իրերի մանրածախ առևտրի 270 կետ: DTC առաջնային գնորդ է:</p>
<p>Dimexion (Հնդկաստան) Զբաղվում է ադամանդի վերամշակմամբ և ոսկերչական իրերի արտադրությամբ: Ունի վերամշակման գործարաններ Հնդկաստանում և Չինաստանում:</p>	<p>Suashish Diamonds (Հնդկաստան) Զբաղվում է ադամանդագործությամբ և ոսկերչական իրերի արտադրությամբ: Վաճառքները՝ մոտ 200 մլն ԱՄՆ դոլար: Ունի վերամշակման գործարաններ՝ Հնդկաստանում, Բոթսվանայում:</p>
<p>Dalumi (Իսրայել) Զբաղվում է ադամանդի վերամշակմամբ(0.1-5 կարատ), ոսկերչական իրերի արտադրությամբ Ունի վերամշակող գործարաններ Իսրայելում, Հնդկաստանում, Բոթսվանայում: DTC, BHP Billiton առաջնային գնորդ է:</p>	<p>AMC NV (Բելգիա, Անտվերպեն) Զբաղվում է ադամանդի վերամշակմամբ: Ունի չորս գործարան՝ Բելգիայում, Նամիբիայում, Չինաստանում, ՀԱՀ-ում:</p>
<p>DDM Arabov (Իսրայել) Իսրայելի խոշորագույն վերամշակված ադամանդ արտահանողներից է: Զբաղվում է վերամշակմամբ, վաճառքով, ոսկերչական իրերի պատրաստմամբ: DTC առաջնային գնորդ է: Ունի վերամշակող գործարաններ Բելգիայում, Բոթսվանայում, Իսրայելում, Հնդկաստանում, ՀԱՀ-ում, Ռուսաստանում:</p>	<p>Leo Schachter International LTD (Իսրայել) Զբաղվում է ադամանդի մեծածախ վաճառքով, վերամշակմամբ, ոսկերչական իրերի արտադրությամբ: 2011թ.-ին Իսրայելի մշակված ադամանդի ամենախոշոր արտահանողն էր: Ունի վերամշակող գործարաններ Թայլանդում, Նյու Յորքում, Բոթսվանայում, Իսրայելում, Հնդկաստանում:</p>